

# Առաջավոր

# ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ինժեներ


Երեսնի էլեկտրատեխնիկական գործարանում III և IV գարարիտների ( $0,4-4,5$  կՎա) էլեկտրաշարժիչների յուրացումն ու թողարկումը մեծ դժվարությունների հետ էին կապված: Այսպիսում ստատորի փաթաթման պրոցեսում պահանջվում էր ստատորի փորատները լցնել դալարներով, նրանց անցկացնելով փորատի նեղ ճեղքով այնպես, որպեսզի հաղորդալարերի մեկուսացումը շխախտվի:

Փաթաթման պրոցեսի բոլոր շարժումների ուշադիր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ փորատի ճեղքի նույնիսկ փոքրիկ լայնացումը զգալիորեն բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և պակասեցնում խոտանի քանակը:

Միաժամանակ ստատորի ճեղքի լայնացումը ակտիվ երկաթի հաշվին, բացասարար կանդրադառնա շարժիչի աշխատանքային բնութագրերի վրա: Այդ պատճառով էլ ես որոշեցի փորատի ճեղքը լայնացնել փորատային մեկուսացման ձևը փոխելու հաշվին: Եթե առաջ փորատային մեկուսացումը նեղացնում էր ստատորի փորատի առանց այն էլ նեղ ճեղքը (նկ. 1 ա), ապա այժմ, նախօրոք այդ մեկուսացմանը փորատի ձև տալով (նկ. 1 բ), կարելի է զգալիորեն մեծացնել ճեղքը: Եթե, օրինակ, Ա32/4 շարժիչի ստատորի 80 գալարները ( $0,88$  մմ) մտցվում էին 1,5 մմ լայնությամբ փորատի մեջ, ապա այժմ այդ նույն հաղորդալարերը մտցվում են 2,3 մմ լայնու-

թյամբ ճեղքի միջով: Դա զգալիորեն բարձրացրել է արտադրողականությունը և պակասեցրել խոտանը:

Իմ առաջարկությամբ, լաքագործվածքը 458 լաքով կպցնում են ստվարաթղթին և հատուկ հարմարանքով նրան տալիս փորատի մեջ մըտցնելու հարմար ձև:




Նկ. 1. Մեկուսացումով փորատի էսքիզը.  
ա—մինչև առաջարկությունը, բ—առաջարկությունից հետո:

Մեկ շարժիչի համար ձեկ այդ փոփոխման վրա ծախսվում է 1 րոպե, իսկ փաթաթման ժամանակը կրճատվում 10 րոպեով:


Այսպիսով, օպերացիայի վրա մեկ րոպե կորցնելով, մյուսի վրա շահում ենք 10 րոպե: Յուրաքանչյուր շարժիչում այդ առաջարկությունը տալիս է լաքագործվածքի տնտեսում, որ տարեկան կազմում է 60 հազ. ռուբլի:

և ծայրերը եռակցում, ընդ որում եռակցման տեղում հաղորդալարը հաճախ կարվում էր:

Այդ աշխատանքները պահանջում էին շատ ժամանակ և յուրաքանչյուր շարժիչի համար 0,9 մ բակելիտային խողովակ: Սակայն ստատորի փաթույթի կոնստրուկցիան թույլ է տալիս յուրաքանչյուր ֆազին համապատասխանող սեկցիաները անընդհատ փաթաթել: Դրա համար անհրա-



Նկ. 2. Շաբլոն՝ ստատորի փաթթոցի սեկցիաների փաթաթման բառար.  
ա—միջև առաջարկությունը, բ—առաջարկությունից նետո:



ժեշտ էր նոր հարմարանք ստեղծել, որը և ես առաջարկեցի (նկ. 2):

Նոր շաբլոնը հնարավորություն է տալիս մեկ ֆազի լրիվ փաթույթը միանգամմից ստանալ:

Այժմ փաթաթող բանվորը մեկ շարժիչի ստատորի լրիվ փաթույթ ստանալու համար 6 կամ 9 անգամի փոխարեն, ինչպես այդ առաջ էր արվում, հաստոցին շաբլոնը ամրացնում է ընդամենը 3 անգամ: Նոր շաբլոնի շնորհիվ վե-

III և IV գաբարիտների միասնական սերիայի էլեկտրաշարժիչների ստատորի փաթույթի յուրաքանչյուր ֆազի համապատասխան ծայրերը իրար հատ միացնում էին միայն փորակը մտցնելոց հետո:

Սեկցիաների միացման համար նրանց եզրերին բակելիտային խողովակներ էին հագցնում:



րացել է Հաղորդավարերի ծալքերը 6 կամ 9 անգամ մաքրելու անհրաժեշտությունը, խնչպես այդ արված էր անցյալում: Լրացուցիչ մեկտւսիչ խողովակների արժեքը կազմել է 60 հազ. ռուբլի:

Այս երկու առաջարկությունները կարող են արմատավորվել Սովետական Միությունում թողարկվող միասնական սերիաների գրեթե բոլոր էլեկտրաշարժիչների արտադրության մեջ:


## ԴԵՏԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Երևանի և Տաշքենդի էլեկտրատեխնիկական գործարանների միջև ստեղծված սերտ համագործակցությունը խիստ դրական արդյունքներ է տալիս:

Տաշքենդիներն իրենց բարեկամներին ուղարկել են պակետային փոխարկիչների կոնտակտա-



Կողըսմէ ԱԲ



Կողըսմէ ԱԲ

ա—կափարիչ՝ պատրաստման հին եղանակի վառել, բ—կափարիչ՝ պատրաստման նոր եղանակի վառել:

Ին դանակի արտահատման դրոշմոցի նախագիծը, իսկ երևանցիները, իրենց հերթին, տաշքենդիներին մատակարարել են ՊՎԶ-25 և ՊՊ-3 անշատիչների կափարիչների վառնի կողածալման դրոշմոցի գծագրեր:

Առաջ վկանները պատրաստվում էին մեխանիկական բարդ մշակումից հետո և հոակցվում էին կափարիչին:

Այդ վկանների պատրաստման նոր եղանակը, որն առաջարկել է տեխնիկական բաժնի ինժեներ Լ. Մատանյանը, 5—6 անգամ բարձրացրել է աշ-

խատանքի արտադրողականությունը և, որ խիստ կարեսոր է, բեռնաթափել է մեխանիկական ցեխն ու տարեկան կտա 45.000 ռուբլու պայմանական տնտեսում: 1 անկարում ցուց է տրված հին եղանակով, իսկ 1 բնակարում՝ նոր եղանակով պատրաստվող վռանով կափարիչը:

Գործիքային ցեխի փականագործ Կ. Բալթայանը պատրաստել է նոր դրոշմոց՝ գամերի համար կոնտակտային դանակի շորս անցքերը միաժամանակ արտահատելու նպատակով:

Առաջ այդ կատարում էին չորս օպերացիայից հետո, կոնդուկտորի օգնությամբ:

Կ. Բալթայանի առաջարկությունը 3 անգամ բարձրացնում է այդ օպերացիայի աշխատանքի արտադրողականությունը և տարեկան տալիս է 24 հազ. ռուբլու պայմանական տնտեսում: